

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴԱՐԻ

Թ Ի Ի 3. Օ Գ Ո Ս Տ Ո Ս 13.

Ժրանի ողորմածաց, զի նորա ողորմութիւն գտցեն:

Երկրի վրայ մէկի մը ողորմելը կամ ողորմութիւն տալը՝ ամենամեծ առաքինութիւն մըն է մարդկային ընկերութեան որն որ մեր Փրկիչը եօթը երանութեց կարգը սահմանեց, ըսելով «ԵՐԱՆԻ ՈՂՈՐՄԱԾԱՅ ԶԻ ՆՈՔԱ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԴՏՅՆՆ»։ Եյս Ետուածասահման ողորմութեան գործը ևս աւելի ազդու է, երբ աշխարհի յանկարծասա զժբաղդութեանց պատճառաւ, յետին տառապեալ ու վշտացեալ ընդհանուր բաղնութեան մը համար 'ի գործ դրուին:

Սակայն գիտնալու է թէ՛ այս մեծագոր առաքինութիւնը գործելու համար հարկ չէ որ մարդս իւր կարողութենէ վեր կամ չափէն աւելի բան մը ընելու խնդրէնք նեղէ. այլ ամեն ատեն յիշելու է զարձեալ Որդւոյն Ետուծոյ՝ այն աղքատ աղբի կնկան ըրած (եղիւ լումայի) ողորմութեանը համար ըսածը թէ՛ «Եմէն աւելի՛ ձեզ, զի այրին այն տառապեալ շատ արկքան դամենեսեան, որ արկին 'ի գանձանակն»։ Եյս՝ այս խօսքը ամեն ժամանակ յիշելու եմք, բայց այժմ՝ հարկապահանջ պարագայի մը մէջ ևս առաւել մտքեմք ինքեզ, ածապարենք, երթանք այն գանձանակին քով, որ քիչէն քիչ մեր ողորմութեան տրոցը կ'ապասէ՝ Ետուծոյ տանի զժբաղդ ու կարօտացեալ եղբարց օգնելու համար, որոնք սա վայրկեանս մեր նիւթա կան օգնութեանը ակնկալու են:

Ուրեմն ո՞վ զթափախ Հայկայ ծնունդը, զուք ալ ողորմեցէք այն ողորմելիներուն, որպէս զի ըստ խոստմանն Քրիստոսի Փրկչին մերոյ՝ «Ողորմութիւն» գանէք։ Եւ արդ փութապէս տարէք ձեր անձնայօժար սրտէ բղխած փոքրիկ ողորմութեան գանձերը այսինքն նուէրները, արկէք ծածկաբար այն խղճալեաց Գանձանակին որ սահմանատեղին է Մեծ Կորխանի վերի դուռը՝ նթերցատիրաց թանգարանի սենեակը թիւ 6: Եւ այնպէս առատաբար փոխաբնող Երկնաւոր «Հայրն (ձեր) որ տեսնէ 'ի ծածուկ՝ հատուցէ (ձեզ) յայտնապէս»:

Առ. Յ. Ն. Ս. Ասիացի:

Ար ըսեմք թէ՛ մէկու կէս տարիէ 'ի վեր՝ ձեր ծառայութեանը մէջ գտնուած, Մ. Ս. անուանով անձին ճամբայ տուած ատեննիդ՝ այնքան ատենուան վարձքը, իրեն չի հատուցանելէ ետեւ, անարգ խօսքերով ալ նախատեր էք այն բնական տկար խեղճը: Ժամանակ մը անցներով նորէն խնդրեր, նորէն կծու յանդիմանութիւններով վրէտներ էք ձեր դռնէն:

Արջայպէս քսան երեսուն անգամ երթալ գալէն, զոյգ մը ոտքի աման հինցունելէն, ու շատ մը հայհոյութիւն յետոյ՝ օր մըն ալ գաւազանի ու սպտակի շարժումներ երեցեր է: Եւ հա տարի մըն է եղեր որ այն խեղճը իւր երկիրը, ընտանիքն ու զաւկները երեսի վրայ թողուցեր՝ այս ստակին հատուցուելուն կ'ապասէ եղեր: Եթէ ստոյգ է այս բանս մեծ անգթութիւն մը, և հրապարակաւ անարգուելու գործ մըն է:

Ուստի այս անգամ ձեր անձնական պատիւը յարգելու համար ժամանակ մը ևս ձեր բացաշայտ անունն ու գործին խկը ծածկութեան մէջ կը պահեմք: Սակայն ձեզի ալ հարկ է՝ որ կամ բարի ձեռքով և կամ անուշ լեզուով՝ զանի գոհ ըրած, մեղի ալ նոյն մարդուն ձեռք ծանուցանէք իրեն զոհութիւնը:

ԺԱՆՈՒՑՈՒՄՆ

ՏԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՓՈՓԱՆՔ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Զ. ԱՐԱՄԵԱՆ

Յարգոյ Գ. Խ. Միտքեան քաջահմուտ և հեռատես գրչին ծայրէն ելած, Մատիս լրագրոյն Բանասիրական մասին մէջ սկըսած դատաքննութեանց շարունակութիւնն ու վերջն է՝

Գլխը 4 1/2 Ժրանք:

Ար ծախուի Մարգարեային խանութը:

Խմբագիր-Տնօրէն

Մ. Գ. ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՐՈՐՃԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՖԻՆԱՆՃԱՐԱՐ